ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին մասով, «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով և Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 648-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով և հաշվի առնելով, որ Երևանի Արամի փողոցի 21 և 21շենքի թիվ 1 բնակարանները քանդված են՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ միջոցներ ձեռնարկել Երևանի Արամի փողոցի 21 շենքի թիվ 1 բնակարանի նկատմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցումը դադարեցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 01.03.2007թ. N347-Ն որոշմամբ ք.Երևան, Արամի փողոցի 21 հասցեում գտնվող գույքերի ձեռքբերող է ճանաչվել «Ի ԷՄ ՍԻ» ՓԲ ընկերությունը:

Երևանի Կենտրոն համայնքի Արամի փողոցի 21 և 21շենքի թիվ 1 բնակարանները օտարման գործընթացն իրականացնելիս ներկայացվել են որպես կարգավիճակ չունեցող շինություններ։

Կենտրոն համայնքի Արամի փողոցի հ.21 բնակարանը Սպանդարյանի շրջգործկոմի 14.01.1994թ. հ.1/94 և 03.08.1995թ.հ. 26/5 որոշումներով հատկացվել է Գայանե Սարգսյանցի ընտանիքի 5 անձերին:

Երևանի Կենտրոն համայնքի Արամի փողոց 21 շենքի թիվ 1 բնակարանում 2000 թվականի հունվար ամսից հաշվառվել և բնակվել է Սուսաննա Մկրտչյանը։

Երևանի Կենտրոն համայնքի Արամի փողոցի 21 շենքի թիվ 1 բնակարանը հանդիսացել է Երևանի Կենտրոն թաղային համայնքի սեփականությունը, որի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցվել է 25.06.2008թ-ին (սեփականության իրավունքի վկայական հ.2551985)։ Կենտրոն համայնքի սեփականության վկայականում Արամի փողոց 21 շենքի թիվ 1 բնակարանի հետ միասին ներառված է նաև Արամի փողոցի հ.21 բնակարանի 1-ին հարկը։

Հայաստանի Հանրապետության և «Ի ԷՄ ՍԻ» ՓԲ ընկերության միջև 13.08.2007թ.կնքված պայմանագրի համաձայն՝ «Ի ԷՄ ՍԻ» ՓԲ ընկերության և Սուսաննա Մկրտչյանի միջև կնքվել է «Ֆինանսական աջակցություն ստանալու և տարածքի ազատման» պայմանագիր, իսկ 18.11.2015թ. կնքվել է Հրաժարագնի պայմանագիր հ.61/5-18.11.18, որի հիման վրա Սուսաննա Մկրտչյանին Երևանի Կենտրոն համայնքի Արամի փողոցի 21 շենքի թիվ 1 բնակարանի դիմաց տրվել է փոխհատուցում և 26.11.2015թ. վճարվել է 17.789.230 ՀՀ դրամի հրաժարագին։

՝ «Ի ԷՄ ՍԻ» ՓԲ ընկերության և Գայանե, Տիգրան, Հովհաննես, Արմեն, Արման և Դավիթ Սարգսյանցների ու Նարինե Բաղդասարյանի միջև կնքվել է «Ֆինանսական աջակցություն ստանալու և տարածքի ազատման» պայմանագիր, իսկ 20.02.2017թ. կնքվել է Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր հ.6/1-20.02.17, որի հիման վրա նշված անձանց Կենտրոն համայնքի Արամի փողոցի հ.21 բնակարանի դիմաց տրվել է փոխհատուցում և որպես սեփականություն տրամադրվել է ք. Երևան, Կենտրոն, Սայաթ -Նովա պողոտայի 19/1 շենքի 86.4 մակերեսով հ. 67 բնակարանը, որի արժեքը կազմում է 24.920.400ՀՀ դրամ։

Երևանի Կենտրոն համայնքի Արամի փողոցի 21 և 21շենքի թիվ 1 բնակարանները քանդված են ։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ չի թույլատրվում սեփականատիրոջ գույքը հարկադրաբար վերցնել կամ առգրավել, բացի այն դեպքերից, երբ օրենքով նախատեսված հիմքերով սեփականությունն օտարվում է հասարակության և պետության կարիքների համար (հոդված 218)։

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին փոխհատուցումը տրվում է օտարվող սեփականության դիմաց տրվող փոխհատուցման գումարից։ Ուստի՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման դեպքում համայնքը, որպես գույքի սեփականատեր, պետք է փոխհատուցեր իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակարանի նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին :

Արամի փողոցի 21 և 21շենքի թիվ 1 բնակարանների բնակիչներին համապատասխան պայմանագրերով տրվել է փոխհատուցում և վերջիններս ապահովվել են բնակարաններով։

Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 648-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2017

թվականի ծրագրի 4-րդ կետի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են Երևանի քաղաքապետի որոշմամբ սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել (օտարվել) այն անձին (անձանց) կամ ընտանիքներին, որոնք «Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» և «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան հանդիսացել են սեփականաշնորհման (մասնավորեցման) սուբյեկտ և (կամ) վարձակալ, դրանց գործողության ժամանակահատվածում չեն սեփականաշնորհել (մասնավորեցրել) իրենց բնակարանները կամ բնակելի տները, ներկայումս հաշվառված ու մշտապես (փաստացի) բնակվում են այդ բնակարաններում կամ բնակելի տներում, ինչպես նաև այն անձանց կամ ընտանիքներին, որոնք Հայաստանի Հանրապետության կառավարության, պետական այլ մարմինների կամ Երևանի քաղաքապետի կամ Երևանի թաղային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների և կարգադրությունների կամ պետական մասնակցությամբ ընկերությունների (պետական ձեռնարկությունների) կողմից տրամադրված օրդերների (այլ փաստաթղթերի) կամ սահմանված կարգով ուժի մեջ մտած դատական ակտերի հիման վրա մշտապես (փաստացի) բնակվում են դրանցում:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է թույլատրել Երևանի քաղաքապետին «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ միջոցներ ձեռնարկել Երևանի Արամի փողոցի 21 շենքի թիվ 1 բնակարանի նկատմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցումը դադարեցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Թույլտվություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Թույլտվություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ